ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՋԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 50 ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՋԱՒԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆԵԱՆ, ՈՐ Ի ԿԱՀԻՐԷ, ԵԳԻՊՏՈՍ

Սիրելի Սրբազան,

Աշխարհասփիւռ մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ Մեր շնորհաւորանքները բերում քահանայագործութեան յիսնամեայ եւ առաջնորդական Ձեր առաքելութեան քառասնամեայ յոբելեանների ուրախաբեր առիթներով:

Հոգու խնդութեամբ ենք անդրադառնում Տէրունակոխ երկրում հաւատքի ու գիտութեան հունդեր ամբարած եկեղեցականիդ կէսդարեայ ծառայութեանը: Քահանայական շնորհին արժանանալուց յետոյ, Աստուածային կամքը Ձեզ առաջնորդեց դէպի Եգիպտոս՝ Հայրենիքից հեռու բնակուող մեր ժողովրդի զաւակներին անխոնջ քարոզչութեամբ առաջնորդելու առ Բարձրեալ Տէրը մեր, զօրացնելու նրանց հաւատը եւ նրանց կեանքում կենդանի եւ զօրեղ պահելու մեր Եկեղեցին:

Մենք Հայրապետութեան առաջին տարում հաճելի առիթ ունեցանք լինելու Եգիպտոսում, ուր հոգու խնդութեամբ ականատես եղանք թեմական առաջնորդի պաշտօնում Ձեր ծառայութեան բարի պտուղներին: Ձեր հոգածու սպասաւորութեամբ շէն ու պայծառ է եգիպտահայ գաղութի ազգային-եկեղեցական կեանքը, վառ է սէրն ու հաւատարմութիւնը հանդէպ Հայրենի մեր աւետեաց երկիրը եւ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Մեզ համար հաճելի էր տեսնել Ձեր նկատմամբ բարեպաշտ հաւատացեալների սէրն ու յարգանքը, որին Դուք արժանացել էք Ձեր նուիրեալ ծառայութեամբ:

Արդարեւ, Դուք շնորհընկալ էք Ամենակարող Աստծուց, Ով հանապազ զօրացնում է Ձեզ եւ Ձեր կեանքը լցնում Եկեղեցուն, հարազատ ժողովրդին ու հայրենիքին մատուցած բարի ծառայութեան երջանկութեամբ:

Սիրելի Սրբազան, մասնաւոր գոհունակութեան առիթ է Մեզ հաստատել, որ Դուք քահանայագործութեանը զուգընթաց զբաղուում էք նաեւ գիտական գործունէութեամբ: Հայոց վարդապետի լուսաբաղձ առաքելութեամբ Դուք շարունակում էք ճանաչողութեան նորանոր ակունքներ պեղել՝ «ի պայծառութիւն Եկեղեցւոյս Հայաստանեայց եւ ի լուսաւորութիւն ազգիս հայոց»:

Մայր Եկեղեցու անդաստանում Ձեր արդիւնաշատ ծառայութեան բարձր գնահատանքով, ընդառաջելով Եգիպտոսի հայոց թեմի Թեմական Խորհրդի խնդրանքին, Ձեր յոբելեանների ուրախ առիթով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի մաղթում ենք Ձեզ քաջառողջ եւ արեւշատ կենաց օրեր, որպէսզի Տիրոջ Աջի հովանու ներքոյ երկար տարիներ շարունակէք Ձեր հովութիւնը՝ ի մխիթարութիւն բարեպաշտ հաւատացելոց եւ ի զօրացումն մեր Մայր Եկեղեցու:

Թող Ամենակալ Տէրն անսասան պահի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 27-ն Մարտի
Յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 83